





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670, էլ. փոստ  
verinptghni.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 83

#### ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 81 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով **որոշում եմ**

Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով Վերին Պտղնի համայնքում «Խմելու ջրի ջրագծի անցկացում», «Արևային կայանների տեղադրում», «Մշակույթի տան կառուցում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ կազմակերպելու մասին» թիվ 81 որոշման վերանագրում, բովանդակության 1-ին, 2-րդ և 4-րդ մասերում և որոշմամբ հաստատված հանրային քննարկումների հրավերում՝ «անցկացում» բառը փոխարինել «կառուցում» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց, թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
20 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 84**

**<<ՍԱՆՌԱՅՍ ՀՈԹԵԼ>> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ  
ԻՐԱՑՄԱՆ , ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ  
ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ  
ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 55-Ն որոշման պահանջներով , ինչպես նաև հիմք ընդունելով << Սանռայս Հոթել >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝**որոշում եմ.**

1. <<Սանռայս Հոթել >> ՍՊԸ-ին տրամադրել համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման, ինչպես նաև ոգելից և ալկոլոհային խմիչքների և օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի 2-րդ եռամսյակի 72 օրվա համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**